ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար Ս. Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 թվականի դեկտեմբերի 10-13-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք գործուղման վերաբերյալ

Գործուղվող անձ

Իրավախորհրդատու Մարի Չաքրյան

Երկիր/քաղաք/ժամկետ

Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ժնև, 2023 թ. դեկտեմբերի 10-13-ը:

Հրավիրող կողմ

ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնապահպանական բաժին, «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայի քարտուղարություն:

Նպատակը

Մասնակցելու Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ) հարցերով տեղեկության հանրային հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի և Կենսաբազմազանության կոնվենցիաների քարտուղարությունների համատեղ 4-րդ կլոր-սեղան հանդիպմանը և ներկայացնելու Օրհուսի կոնվենցիայի ԳՁՕ ուղղումը վավերացնելու և Կարթագենյան արձանագրության իրականացման համահունչ գործողությունները:

Մասնակիցների շրջանակ

Վերոնշյալ երկու կոնվենցիաների կողմ երկրների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ, երկու կոնվենցիաների քարտուղարությունների աշխատակազմ, ԵՄ ներկայացուցիչներ, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ի դեմս «Էկո ֆորում» ցանցի անդամների:

Հայաստանից հանդիպմանը մասնակցել են Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Հակոբ Մաթևոսյանը և ես՝ Մարի Չաքրյանս: Առցանց մասնակցել են նաև «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ երիտասարդական խմբի և «Այբ» ավագ դպրոցի սաները:

Օրակարգում.

- Օրհուսի կոնվենցիայի Ալմաթիի ԳՁՕ ուղղման վավերացման ուղղությամբ առաջընթացը,

և Կենսաանվտանգության մասին Կարթագենյան արձանագրության 23-րդ հոդվածին համահունչ գործողությունները, մարտահրավերներ և լավագույն փորձ,

- Հեղեկատվության հասանելիություն. Օրհուսի կոնվենցիայի և Կարթագենյան արձանագրության տեղեկատվության հասանելիության դրույթները,
- Հանրային իրազեկում և էկոկրթություն.. պանելային քննարկում,
- Հանրային մասնակցություն. Օրհուսի կոնվենցիայի և Կարթագենյան արձանագրության համապատասխան դրույթների վերաբերյալ զեկուցումներ և քննարկում,
- Արդարադատության մատչելիություն. Օրհուսի կոնվենցիայի և Կարթագենյան արձանագրության արդարադատության հասանելիության դրույթների ներածություն,
- Դասընթաց ԿԶՕ/ԳԶՕ-ների արդարադատության մատչելիության ընթացակարգերի վերաբերյալ, ներառյալ փորձի ներկայացում/դեպքերի ուսումնասիրություն
- Ամփոփում:

Ելույթներ

Հակոբ Մաթևոսյանի հետ համատեղ ներկայացրել ենք Հայաստանում ԳԶՕ օրենքի ընդունմանը նախորդած գործընթացները, մարտահրավերներն ու դրանց հաղթահարման միջոցները, ԳԶՕ օրենքի դրույթների համապատասխանությունը Օրհուսի կոնվենցիայի ԳԶՕ ուղղմանը, Կարթագենյան արձանագրության տեղեկատվական առցանց համակարգի վերաբերյալ վերապատրաստումները, այդ հարթակում գրանցվելու, տեղեկությունների հրապարակման ուղղությամբ աշխատանքը, ինչպես նաև ներկայում շրջանառվող «Կենսաանվտանգության և կենսապահովության մասին» օրենքի ընդունման կարևորությունը թե՛ ԳԶՕ ուղղման վավերացման հիմքերի ստեղծման, թե՛ Կարթագենյան արձանագրության արդյունավետ իրականացման առումով (Տեսասահիկը և ելույթի տեքստը կցվում է, անգլերեն տարբերակ):

Պատասխանել եմ նաև հանդիպման մասնակիցների հարցերին, թե ԳԶՕ օրենքով ինչպես են կարգավորվում լաբորատոր հետազոտությունների և վերահսկման հարցերը, ինչպես նաև կոնվենցիայի իրականացման գործում այլ գերատեսչությունների հետ համագործակցության ձևաչափը:

Նշել եմ, որ նախկինում գոյություն է ունեցել Օրհուսի կոնվենցիայի իրականացման միջգերատեսչական մարմին, որի վերագործարկման անհրաժեշտությունը քննարկման առարկա է:

Հանդիպման մասնակիցները և երկու կոնվենցիաների քարտուղարությունները շնորհակալություն հայտնեցին համապարփակ և արժեքավոր տեղեկատվության տրամադրման համար, և բարձր գնահատեցին ոլորտում Հայաստանի ջանքերը և ԳԶՕ ուղղումը վավերացնելու ուղղությամբ տարվող աշխատանքը:

«Այբ» ավագ դպրոցի սաները առցանց տեսասահիկով ներկայացրեցին «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ խորհրդատվական աջակցությամբ իրենց հասակակիցների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները, ինչպես նաև արձանագրումը, թե ինչքան կարևոր է դեռահասների և երիտասարդների իրազեկումը, մատչելի տեղեկության հասանելիութունը և առկասարակ էկոկրթությունը: Հանդիպման մասնակիցները

չափազանց ողջունեցին երիտասարդների ելույթը և բարձրացրած հարցերը, ինչպես նաև գործընթացներին նրանց առավել ակտիվորեն ներգրավման անհրաժեշտությունը:

Արդյունքներ

- Արձանագրվեց էկոկրթության և հանրային իրազեկման ուղղությամբ շարունակական գործողությունները, այդ թվում կայուն զարգացման նպատակներին հասնելու առումով, հետևապես նաև երկու կոնվենցիաների կողմերի միջև էկոկրթական նյութերի և փորձի փոխանցման անհրաժեշտությունը,
- Կարևորվեց Կենսաբազմազանության համաշխարհային շրջանակի 22-րդ թիրախի իրականացման ապահովումը հատկապես կենսանվտանգության հարցերում տեղական համայնքների, կանանց ու երիտասարդների ներգրավման, ինչպես նաև արդարադատության ապահովման առռմով,
- ԳՁՕ լաբորատոր հետազոտությունների անցկացման, այդ թվում մասնավոր լաբորատորիաների հետ համագործակցության փորձի փոխանակման անհրաժեշտությունը,
- Վերահսկողական մեխանիզմների վերաբերյալ փորձի փոխանակման կարևորությունը,
- Մասնավոր հատվածի հետ համագործակցությունը:
- Հետաքրքիր էր Ինդոնեզիայի փորձը ԳՁՕ հարցերով խորհրդի աշխատանքի ու կառուցվածքի առումով:

Հանդիպման արդյունքների ամփոփաթերթը տրամադրվելու է լրացուցիչ:

Հանդիպման նյութերը հասանելի են հղումով՝ https://unece.org/info/Environmental-Policy/Public-Participation/events/375497 :

Հանդիպումներ և Պայմանավորվածություններ

Հանդիպում եմ ունեցել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի քարտուղար Ֆիոնա Մարշալի հետ: Վերջինս տեղեկացրեց, որ ակնկալում են մինչև 2024թ. հունվարի 24-ը ստանալու Հայաստանի նկատառումները VII/8a որոշման առնչությամբ կոմիտեի նախնական որոշման վերաբերյալ, որից հետո այն կքննարկվի և կամփոփվի կոմիտեի հաջորդ նիստում:

Ինչ վերաբերում է ԳՁՕ մասին ՀՀ օրենքի համապատասխանությանը ուղղմանը, ապա հնարավոր է սեղմ ժամկետում չկարողանան կարծիք տրամադրել, քանի որ կոմիտեն ներկայում չափազանց ծանրաբեռնված է անհամապատասխանության գործերի քննման հարցերով:

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու,
Օրհուսի կոնվենցիայի և ԱԱՏՌ արձանագրության ազգային համակարգող՝

Մ. Չաքրյան

18.12.2023